

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

ՈՐՈՇՈՒՄ N 37/2

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրվաբանական վարչության պետի 16.01.2018թ. N15 որոշման դեմ Հայկ Գալստյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Հայկ Գալստյանի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրվաբանական վարչության պետի 16.01.2018թ. N15 որոշման դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, իսկ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում Հայկ Գալստյանի կողմից բաց է թողնվել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրվաբանական վարչության պետի 16.01.2018թ. N15 որոշումը վարչական կարգով բողոքարկելու ժամկետը: Մասնավորապես, նշված որոշումը Հայկ Գալստյանը ստացել է 23.01.2018թ. (գործում առկա է համապատասխան ապացույցը), սակայն դրա դեմ բողոքը բերվել է միայն 26.06.2018թ.:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայկ Գալստյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ